

# Տուբերկուլոզի զննություն Թարմացված պահանջներ դպրոցահասակ երեխաների համար

## Ի՞նչ է տուբերկուլոզը:

Տուբերկուլոզը հիմնականում թոքերի վարակիչ հիվանդություն է, որը առաջանում է բակտերիայի միջոցով: Տուբերկուլոզը մարդուց մարդ է փոխանցվում օդային ճանապարհով:

## Տուբերկուլոզի վերաբերյալ տարածված առասպելները՝

**Առասպել՝** տուբերկուլոզով վարակված լինելը նշանակում է, որ դու տառապում ես հիվանդության ակտիվ տեսակով:

**Փաստ՝** Վարակված լինելը ոչ միշտ է նշանակում, որ դու տառապում ես այդ հիվանդությամբ: Տուբերկուլոզի բակտերիայով ոչ բոլոր վարակվածներն են հիվանդանում:

Տուբերկուլոզի վարակ	Տուբերկուլոզի ակտիվ հիվանդություն
Հիվանդ չի զգում	Հիմնականում հիվանդ է զգում
Ախտանիշներ չունի	Ունի հետևյալ ախտանիշները՝ <ul style="list-style-type: none"> <li>• Ծանր հազ երեք կամ ավելի շաբաթների ընթացքում</li> <li>• Կրծքավանդակի ցավ</li> <li>• Արյունոտ հազ</li> <li>• Թուլություն</li> <li>• Ծայրահեղ հոգնածության զգացում</li> <li>• Քաշի կորուստ</li> </ul>
<b>Չի կարող փոխանցել տուբերկուլոզի բակտերիաները ուրիշներին</b>	<b>Կարող է փոխանցել տուբերկուլոզի բակտերիաները ուրիշներին</b>
Հիմնականում ունենում է դրական մաշկի կամ արյան թեստ	Հիմնականում ունենում է դրական մաշկի կամ արյան թեստ
Կրծքավանդակի ռենտգենը նորմալ պատկեր է ունենում	Կրծքավանդակի ռենտգենը կարող է ոչ նորմալ պատկեր ունենալ և լրացուցիչ թեստի կարիք լինի
Տուբերկուլոզի վարակի բուժման կարիք կա, որպեսզի կանխարգելել դրա զարգացումը տուբերկուլոզի ակտիվ ձևի	Տուբերկուլոզի ակտիվ հիվանդության բուժման կարիք կա

**Առասպել՝** Տուբերկուլոզի թեստը նույնն է, ինչ տուբերկուլոզի զննությունը:

**Փաստ՝** Տուբերկուլոզի թեստը նույնը չէ, ինչ տուբերկուլոզի զննությունը: Տուբերկուլոզի զննության ժամանակ մասնագետի կողմից իրականացվում է վտանգի գնահատում (հարցերի շարք): Եթե անձը համարվի բարձր ռիսկայնության, ապա կանցկացնի տուբերկուլոզի վարակի թեստ: Տուբերկուլոզի թեստը ներառում է մաշկի թեստ կամ արյան թեստ: Եթե այդ թեստերը դրական լինեն, ապա կարվի կրծքավանդակի ռենտգեն:

## Ո՞րն է ներկայիս դպրոցի հրահանգը տուբերկուլոզի վերաբերյալ:

Լոս Անջելեսի վարչական շրջանի (Los Angeles County, LAC) Առողջապահության վարչությունը (Department of Public Health, DPH) ներկայումս պահանջում է, որ բոլոր երեխաները, որոնք առաջին անգամ այցելում են մանկապարտեզ կամ դպրոց, անցնեն տուբերկուլոզի վարակի թեստ և արդյունքները ներկայացնեն մինչև դպրոցական դասերի սկիզբը: Եթե մաշկի թեստը դրական է, աշակերտը պետք է անցնի կրծքավանդակի ռենտգեն:

### Տուբերկուլոզի զննություն

## Թարմացված պահանջներ դպրոցահասակ երեխաների համար

### Տարածված առասպելները տուբերկուլոզի վերաբերյալ դպրոցի հրահանգի մասին՝

**Առասպել՝** Դպրոցի հրահանգը թույլ է տալիս հայտնաբերել և բուժել ակտիվ տուբերկուլոզով հիվանդ երեխաներին:

**Փաստ՝** Հրահանգի նպատակն է պարզել և հետևել տուբերկուլոզի վարակի մակարդակը, և ՈԶ թե հայտնաբերել և բուժել ակտիվ տուբերկուլոզի դեպքերը: LAC DPH-ի Տուբերկուլոզի վերահսկման ծրագիրը (Tuberculosis Control Program, TBCP) իրականացնում է հետազոտություն հայտնաբերելու համար ակտիվ տուբերկուլոզի դեպքերը բոլոր տարիքի երեխաների մոտ:

**Առասպել՝** Առանց տուբերկուլոզի դպրոցի հրահանգի հնարավոր չի լինի իրականացնել տուբերկուլոզի դեպքերի դիտարկում:

**Փաստ՝** TBCP-ն կշարունակի հետևել երեխաների մոտ տուբերկուլոզի դեպքերին՝ վստահ լինելու համար, որ տուբերկուլոզով հիվանդների տոկոսը շարունակում է կրճատվել:

**Առասպել՝** Դպրոցի հրահանգը հետևում է, որ ակտիվ տուբերկուլոզի հիվանդությամբ տառապող երեխաները բուժում ստանան:

**Փաստ՝** Հետևելը չի երաշխավորում, որ տուբերկուլոզի վարակի դրական թեստ ունեցող երեխաները կավարտեն բուժումը: Փաստերը ցույց են տալիս, որ շատերը, ովքեր սկսել են բուժումը, չեն ավարտել այն:

**Առասպել՝** Եթե հրահանգին չհետևեն, Լոս Անջելեսի վարչական շրջանում կավելանա տուբերկուլոզով հիվանդ երեխաների քանակը:

**Փաստ՝** Տուբերկուլոզի դպրոցական հրահանգ չունեցող Կալիֆորնիայի այլ շրջանները, ինչպիսիք են՝ Ման Դիեգոն և Րիվերսայդը, շարունակում են ունենալ երեխաների մոտ տուբերկուլոզի դեպքերի կրճատում:

### Ի՞նչ նոր մոտեցումներ են նախատեսվում:

- Տուբերկուլոզի ներկայիս դպրոցական հրահանգի ավարտ: Երեխաները տուբերկուլոզի զննություն կանցնեն առաջին դասարանի ֆիզիկական զննության հետ մեկտեղ:
- Ձեր երեխան կանցնի իր բոլոր զննությունները բժշկին մեկ անգամ այցելության ժամանակ:
- Բժիշկները կզննեն աշակերտներին և տուբերկուլոզի թեստ կանցկացնեն միայն այն ժամանակ, եթե մեծ ռիսկ հայտնաբերեն:
- Ձեր երեխային կուղարկեն բուժհաստատություններ, որտեղ նա կարող է ստանալ լիակատար խնամք:

### Ինչու՞ այն փոխել:

- Բժշկին մի քանի անգամ այցելելու փոխարեն, այժմ տուբերկուլոզի զննությունը կլինի առաջին դասարանի ֆիզիկական զննության մի մասը:
- Որպեսզի տուբերկուլոզի վարակ չունեցող երեխաները չստանան դեղամիջոցներ, որոնք կարող են վստահել նրանց լյարդը:
- Մասնագետները այս գործընթացը համարում են լավագույն մեթոդը:
- Որպեսզի ավելի մեծ ջանքեր գործադրեն ակտիվ տուբերկուլոզի հիվանդության դեպքեր հայտնաբերելու համար և նվազեցնեն ակտիվ տուբերկուլոզի հիվանդության մակարդակը:
- Վստահ լինելու, որ երեխաները ունեն ընտանեկան բժիշկ իրենց բոլոր բժշկական կարիքների համար:



### Տուբերկուլոզի զննություն

## Թարմացված պահանջներ դպրոցահասակ երեխաների համար

### Որ երեխաները տուբերկուլոզով վարակվելու ավելի մեծ վտանգ են ներկայացնում:

- Միացյալ Նահանգների սահմաններից դուրս ծնված երեխաները և նրանք, ովքեր ծնվել են երկրագնդի այն հատվածներում, որտեղ կա տուբերկուլոզի բարձր մակարդակ (հիմնականում ԱՄՆ-ից, Կանադայից, Ավստրալիայից, Նոր Զելանդիայից և Արևմտյան Եվրոպայի երկրներից բացի բոլոր այլ երկրները):
- Երեխաները, որոնք շփվել են այն անձանց հետ, ովքեր հաստատված կամ կասկածվող տուբերկուլոզի հիվանդություն ունեն:
- Երեխաները, ովքեր մի շաբաթից ավել ճամփորդել են տուբերկուլոզի բարձր մակարդակ ունեցող երկրներ:
- Երեխաները, ովքեր խնում են չմշակված կաթ կամ ուտում են ոչ պաստերիզացված պանիր:

### Դպրոցի հրահանգի այս փոփոխությամբ իմ երեխան ավելի՞ մեծ վտանգի մեջ կհայտնվի:

Ոչ: Ձեր երեխայի համար վտանգի մակարդակը չի փոխվի: Ձեր երեխայի զննությունը կիրականացվի ընդհանուր ֆիզիկական զննության հետ միասին:

### Որտեղ իմ առաջին դասարանցին կարող է անցնել ընդհանուր ֆիզիկական զննությունը:

- Ընդհանուր ֆիզիկական զննությունը իրականացվում է ընտանիքի հիմնական բժշկական ծառայություններ մատուցողի կողմից, ներառյալ անձնական բժիշկները, հանրային կլինիկաները, առողջապահության վարչության կլինիկաները, կանխավճարային առողջապահական ծրագրերը, զինվորական հաստատությունները, որոշ դպրոցական շրջանները և այլ աղբյուրներ:
- Կցվող փաստաթուղթը թվարկում է տարբերակներ՝ ձեր երեխայի համար անվճար կամ ցածր վճարով առողջապահական ծրագիր ձեռք բերելու համար:

### Արդյո՞ք սա վերաբերում է նաև մտորներին, դպրոցի կամավորներին կամ դպրոցի անձնակազմին:

Ոչ: Այս փոփոխությունները կազդեն միայն K-12 դասարանների աշակերտների վրա:

### Ի՞նչ անել, եթե ոչ բոլոր իմ հարցերի պատասխանները գտա այս թերթիկի մեջ:

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք այցելել Տուբերկուլոզի վերահսկման ծրագրի կայքէջը՝ <http://publichealth.lacounty.gov/tb/>

